**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան | 05-ը օգոստոսի 2016թ.
ժամը $10^{00}$

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կատարողականի աուդիտի բ աժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Աթանեսյան

ՀՀՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Տ.Աբրահամյան::

***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ.Աբրահամյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ.Աբրահամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար « մակարոնեղենի » ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-766» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Ա/Ձ Էդուարդ Առուստամյան |
| 2 | Ա/Ձ Արթուր Բաղեյան |
| 3 | «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ |
| 4 | «ՏԴ«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ |
| 5 | «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ |
| 6 | «ՍԱՄԻԿ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված**

**յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

2.1 Թվով 6 մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 թվով 4 մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), իսկ Ա/Ձ Արթուր Բադեյանի էլեկտրոնային հայտում բոլոր հավելվածները, այդ թվում գնային առաջարկի Հավելված 4-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին(սխալ ծածկագիր, սխալ քանակ, սխալ ապրանքի անվանում), ուստի վերջինիս հայտը հանձնաժողովի կողմից մերժվեց: «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ ներկայացրել է ԵՏՄ արտադրության ապրանք, իսկ Հավելված 4.2-ում նշված չէ , ուստի հանձնաժողովը որոշեց վերջինիս առաջարկել շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկեց անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Տ.Աբրահամյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

**Հավելված 1**

| Հ/թ | Գնման առարկան | Չ/մ | Նախահաշվային գին | Քանակը | Ա/Ձ Էդուարդ Առուստամյան | «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ | «ՏԴ«Դոսնկոսյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ | «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ | «ՍԱՄԻԿ» ՍՊԸ | 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | մակարոն եղեն | կգ | 39488400 | 156700 | 34944100/ 41932920 | 36824500/ 44189400 | 38391500/ 46069800 | 29877466.67/ 35852960 | 30948250 37137900 | «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ |

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը,< Էլիտ Ֆուդ >ՍՊԸ, «ՏԴ«Դոսնկոսյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ, «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ, «ՍԱՄԻԿ» ՍՊԸ առաջարկել են ԵՏՄ արտադրության ապրանքներ:

3.2Թվով 5 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Տ.Աբրահամյան)

4.1 «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ ՝ տես Հավելված N 1:

4.2 18.08.2016թ. Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3. Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող | Վ. Գասպարյան |
| Գնահատող | Ա.Մարգարյան |
| Գնահատող | Հ.Մելիքյան |
| Գնահատող | Ա. Մուրադյան |
| Գնահատող | Ս. Աթանեսյան |
| Գնահատող | Ա. Հակոբյան |
| Գնումների համակարգող՝ | Տ.Աբրահամյան |